ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

-

Արենիի համայնքապետարանը հրավիրում է աճուրդի և մրցույթի , որը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 3- ին, ժամը՝ 10^{00}-ին: Հասցեն՝ Վայոց Ձորի մարզ, Արենի համայնք, Արենի բնակավայր, 15 փողոց, շենք 3:

Աճուրդ-վաճառք

Լոտ 1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.14146 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0058-0006, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցեն՝ Արենի գյուղ Աղավնաձոր 13-րդ փողոց 12 հողամաս, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 1 150 000 ՀՀ դրամ:

Մրցույթ-վարձակալություն

Լոտ 1. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.80054 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0149-0051, հողատեսքը՝ այլ) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 50 000 ՀՀ դրամ:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է աճուրդի կամ մրցույթի նախորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10^{00}-ն: Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 5000 ՀՀ դրամ տեղական վճար : Հայտ կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և հայտի ընդունման համար նախատեսված 5000 ՀՀ դրամի անդորրագիրը: Հայտ ներկայացրած մասնակիցները նախքան աճուրդի կամ մրցույթի սկսելը վճարում են նախավճար՝ լոտի 50%-ի չափով: Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, չվճարելու դեպքում նախավճարը չի վերադարձվում Բոլոր վճարումները անհրաժեշտ է կատարել անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝

- տեղական վճարի վճարման հաշվեհամարն է ՝ 900355105082 Կենտրոնական գանձապետարան:
- մրցույթի նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355105058 Կենտրոնական գանձապետարան:
- աճուրդի նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355105132 Կենտրոնական գանձապետարան:

Աճուրդում և մրցույթում չհաղթած մասնակցին մուծված նախավճարը վերադարձվում է՝ գրավոր դիմելուց հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին՝ 028160001, 093752480 Գևորգ Սիմոնյանին: